ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1698 - Ա **27 մարտի 2009թ.**

ՆՈՐՔԻ 17-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 87 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՄԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ, ԱՇՈՏ ԱՐԱՄԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ, ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԱՄԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անդրանիկ Արամի Սանասարյանի (ծնված 13.12.1957թ.), Աշոտ Արամի Սանասարյանի (ծնված 25.05.1961թ.), Արտավազդ Արամի Սանասարյանի (ծնված 17.02.1969թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 17-րդ փողոցի հ.87 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 596.64քմ, որից 560քմ մակերեսով հողամասն Անդրանիկ Արամի Սանասարյանին, Աշոտ Արամի Սանասարյանին, Արտավազդ Արամի Սանասարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 36.64քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1995 թվականը, 26.11.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 17.12.2008թ. հ.10225ա, Երևանի քաղաքապետարանի ‹‹Հողի և ունեցվածքի գործառնություններ›› ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/145 գրությունները, Երևանի քաղաքապետարանի ‹‹Քաղաքաշինություն›› ՊՓԲԸ-ի 13.03.2009թ. հ.20-Ել-1752 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 17-րդ փողոցի հ.87 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ‹‹Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի ‹‹Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին›› հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 17-րդ փողոցի հ.87 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անդրանիկ Արամի Սանասարյանի, Աշոտ Արամի Սանասարյանի, Արտավազդ Արամի Սանասարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 560քմ մակերեսով հողամասին կից 36.64քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 36.64քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Նորքի 17-րդ փողոցի հ.87 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նորքի 17-րդ փողոցի հ.87 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Անդրանիկ Արամի Սանասարյանի, Աշոտ Արամի Սանասարյանի, Արտավազդ Արամի Սանասարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ